

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 22-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻՆ
ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 22 - ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի տարածքային փուլի անցկացման կազմկոմիտեների և մրցավարական հանձնաժողովների կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերի անցկացման կազմկոմիտեին /նախագահ՝ Գ. Բաղայան/

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 16-ի N 1056-Ա/Ք հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 22-րդ մարզական խաղերի անցկացման կանոնակարգի» պահանջների համաձայն կազմակերպել մարզի դպրոցականների հանրապետական 22-րդ մարզական խաղերի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերը.

2) ապահովել մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների զանգվածային մասնակցությունը Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 22-րդ մարզական խաղերին.

3) սահմանված ժամկետներում կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի

Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 22-րդ մարզական խաղերը և ապահովել անցկացման վերաբերյալ տեղեկանքների (համառոտ հաշվետվությամբ) հավաքը և ներկայացումը:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մարզպետ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Գավառ